ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2025 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Ամբիոնի վարիչների հաղորդումը լաբորատոր աշխատանքների ծրագրերում կատարված փոփոխությունների մասին:

2. «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցոլոգիական հարցումների արդյունքների քննարկում (նախորդ տարվա 2-րդ կիսամյակի արդյունքներ)

3. Ընթացիկ հարցեր:

Խորհրդի նախագահ Ա.Ս.Գալստյան – Հարգելի գործընկերներ, խորհրդի 15 անդամներից 12-ը ներկա են նիստին, հետևաբար կարող ենք սկսել: Օրակարգը բոլորիդ ունեք՝ առաջարկություններ, ավելացումներ ունե՞ք:

-Առաջարկ եղավ.

աշխատել ըստ օրակարգի՝ սկսել ընթացիկ հարցերից:

Ա.Ս.Գալստյան, - Այսօր լսելու ենք, անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի հայցորդ Մ.Ս.Հայրապետյանի ատեստավորման հարցը: Ամբիոնից մենք ունենք դրական կարծիք: Հայցորդ Մ.Հայրապետյանը 2-րդ տարվա հայցորդ է, այս ընթացքում հավաքել է հարակից առարկաներից կրեդիտների թույլատրելի շեմը՝ 33 կրեդիտ և մնացել է միայն մասնագիտականը: Հրատարակել է 2 հոդված, որոնցից մեկում միահեղինակ է և մեկ միջազգային թեզիս: Հայցորդը ներկա է այժմ լսենք նրա հաշվետվությունը մեկ տարվա կատարած գիտական աշխատանքների վերաբերյալ:

Ելույթ ունեցավ հայցորդ Մ.Հայրապետյանը, նշեց կատարված ուսումնասիրությունների մասին և հավելեց, որ զուգահեռ կատարում է գրական ակնարկի հավաքագրման և ամբողջականացման գործընթացը:

Հայցորդին հարցեր ուղղեցին պրոֆեսորներ Տ.Վ.Ղոչիկյանը, Կ.Ռ.Գրիգորյանը, դոցենտներ Ա.Ս.Գալստյանը և Գ.Ս.Գրիգորյանը:

Որոշեցին – Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը քվեարկության արդյունքով որոշեց ատեստավորել ԵՊՀ Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի 2-րդ տարվա հայցորդ Մարտին Սերգեյի Հայրապետյանին:

-Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահ, Ա.Ս.Գալստյանը հաղորդեց, քննարկվելու է օրգանական քիմիայի ամբիոնի 1-ին տարվա ասպիրանտ Շուշաննա Վարդանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը: Ամբիոնը քննարկել է նրա ատենախոսության թեմայի հարցը և առաջարկում է հաստատել «Կիսահաղորդիչ հատկություններով օժտված, ազոտ պարունակող զուգորդված պոլիմերների և օլիգոմերների սինթեզ ու ուսումնասիրություն» թեման՝ «Բարձրամոլեկուլային միացություններ» մասնագիտության Բ.00.06 թվանիշով, ղեկավար՝ ք.գ.դ., պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան:

Որոշեցին – Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ, միաձայն (15անդամներից ներկա էին 12-ը) հաստատել, օրգանական քիմիայի ամբիոնի 1-ին տարվա ասպիրանտ, Շուշաննա Վարդանյանի թեկնածուական ատենախոսության թեման «Կիսահաղորդիչ հատկություններով օժտված, ազոտ պարունակող, զուգորդված պոլիմերների և օլիգոմերների սինթեզ ու ուսումնասիրություն» մասնագիտության Բ.00.06 թվանիշով և ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյանին:

Ա.Ս.Գալստյան - Ընթացիկ հարցերում «Քիմիա» բաժնի բակալավրի ծրագրի ղեկավար Լ.Ս.Գաբրիելյանը կներկայացնի կարճ հաղորդում

Լ.Ս.Գաբրիելյան- Հարգելի գործընկեր, ամբիոնների վարիչներ տեղեկացրեք Ձեր ամբիոններում, որ հետևեն e-learning հարթակի լրացմանը: Դասախոսները ոչ միայն պետք է տեղադրեն իրենց ծրագրերը, հարցաշարը այլև կատարեն շաբաթական լրացումներ՝ այն է տեղադրեն օրվա դասախոսության կամ լաբորատոր աշխատանքի վերնագիրը, հնարավորության դեպքում նաև փորձերի կարճ նկարագիրը: Խնդրում եմ չանտեսել և լինել հետևողական:

Նիստի նախագահ Ա.Ս.Գալստյան, - այժմ անցնենք օրակարգի առաջին հարցին. Ամբիոնի վարիչների հաղորդումը լաբորատոր աշխատանքների ծրագրերում կատարված փոփոխությունների մասին։

Ա.Ի.Մարտիրյան- անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ.

« հիմնական փոփոխությունները կատարել ենք 2024/2025 ուս.տարվա ծրագրերում, այս տարի փոփոխություններ չունենք։ Աշխատանքները ընթանում են բնականոն ընթացքով և պարբերաբար ստուգվում են»։

Գ.Ս.Գրիգորյան – ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ. «Մեր ծրագրում կատարվել է փոփոխություն, որ պայմանավորված է էլեկտրոքիմիա բաժնի տեղափոխության հետ։ Այս բաժինը բակալավրի կրթական ծրագրից տեղափոխվել է մագիստրոսական կրթական ծրագիր։ Կատարվել են ծրագրային փոփոխություններ, որոնք բավարարում են նոր կրթական ծրագրին»։

Ա.Ս.Գալստյան- Հարգելի գործընկերներ բազմաբաղադրիչ գնահատման համակարգը դասախոսին հնարավորություն է տալիս ստուգել և գնահատել ուսանողի փորձարարական հմտությունները։ Ուշադրություն դարձրեք այս հանգամանքին՝ առաձին փորձեր առաջարկեք ուսանողների, որպեսզի նրանք կատարեն, որի արդյունքում էլ գնահատեք փորձարարական հմտությունները։

Է.Երիցյան- ուսանողական խորհրդի անդամ- ուսանողները մասնակցության համար ստանում են որոշակի միավորներ, այդ միավորները պետք է տրվեն ոչ թե ֆիզիկական ներկայության համար, այլ փորձարարական հմտությունների համար։ Լաբորատոր աշխտանքների վերջին դասին կամ միջանկյալ, կարելի առաջարկել կատարած փորձերից որևէ մեկի կրկնություն, որի կատարողականության արդյունքում կգնահատվի։

Ա.Ս.Գալստյան, Քիմիայի ֆակուլտետի ժ/պ -Վերջին հարցը, որ այս նիստում քննարկելու ենք կրելու է տեղեկատվական բնույթ։ Այս հարցի մասին ավելի մանրամասն կհաղորդի իր հաշվետվությունում մեթոդ խորհրդի նախագահ Կ.Ռ.Գրիգորյանը։

«Դասախոսը ուսանողի աչքերով» սոցոլոգիական հարցումների արդյունքների քննարկում (նախորդ տարվա 2-րդ կիսամյակի արդյունքներ)՝ գնահատականները միջին են և այստեղ ունենք մի քանի հավելումներ ուսանողների կողմից, որոնք մտահոգիչ են և վերջին 16 տարվա ընթացքում նման երևույթ չի դիտվել: Առաջարկում եմ ուսանողական խորհրդին և մեթոդ խորհրդի նախագահին ուշադիր լինեն և հասկանան նշված մեկնաբանությունների իսկության փաստը:

Խորհրդի նախագահ,
Քիմիայի ֆակուլտետի դեկանի ժ/պ Ա.Ս.Գալստյան

Գիտ. քարտուղար,
Ք.գ.թ., դոցենտ՝ Մ.Ա.Սամվելյան